## ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65>>

04»հուլիսի 2022թ.

ք.Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների Ի.Օսիպյանի,որը գործում է Երևանի վարչության պետի ժ/պ Ի.Օսիպյանի,որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու),մի կողմից,և <<ԼԻԼԱՆԱՐՄ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Յ. Օհանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից,կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և սահմանված կարգով, սույն պայմանագրի (այսուհետ՝ ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի սալիկապատման Գայի արձանի հարակից մայթերի** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն աշխատանքները կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համաձայն հավելված 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N2):

### 2.ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով,նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1.Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել ...ել պատճառված վնասները,եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի` աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը` պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է`**

3.2.1 Աշխատանքը կատարելիս` աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում` այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի`**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված` վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է`**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, անհրաժեշտ նյութերով ու պատշաճ մեխանիզմներով, ինչպես նաև որակով` նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ ... Պատվիրատուի կողմից

սահմանվելու դեպքում,
աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանված ժամկետում և
ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և 6.2
յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի
կետով նախատեսված տույժը:
3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի
լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները
և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:
3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման
անհրաժեշտության ծագման դեպքում` իր միջոցներով կատարել
աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու
անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:
3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա
առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի
ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ,
ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից
սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում
Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու
օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**): Եթե
երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված
Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր
հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում
վերացնել թերությունները:
3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման
գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման
գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր
տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և
Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության
ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը
ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված
փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված
օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր
կողմից ստորագրված`աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը
ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային
գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման
ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի
«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)` նաև հանձնման-ընդունման
արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն
հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է
էլեկտրոնային ստորագրությամբ` լրացնելով միայն այն
սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման
կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի
«Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ»
ենթաբաժնում):
4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի
պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված
փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից
**հաշված 15 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և
էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին
է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման
արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած
դրական եզրակացությունը:
4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի
համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն
չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և
պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային
գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է
վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա
չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական
եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն
ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված
և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում
կատարված աշխատանքը կամ չի մերժում
Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը համարվում է
դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը վերջնաժամկետին
ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված էլեկտրոնային
հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն տրամադրում իր
գնումների համակարգի միջոցով Կապալառուին է հանձնման-ընդունման արձանագրությունը:
կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:
կողմից ստորագրված հանձնման-ընդունման պայմանագրի օրացուցային գրաֆիկով
4.5 Աշխատանքի կամ պայմանագրի աշխատանքների, փուլերի և
նախատեսված առանձին տեսակի աշխատանքների փաստաթղթերին
ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին կազմում են երկկողմ ակտ՝
չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝
թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող
կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:
Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում,
առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:
4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ
պայմանները՝ շինարարության ավարտի մասին
1) Կապալառուի կողմից Պատվիրատուի ղեկավարը
տեղեկությունն ստանալուց հետո Պատվիրատուի Հանրապետության
ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության
կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված
հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն
ընդունելու համար.
2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է
ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի
ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015
թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված
հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից
կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.
3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝
Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-
ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված
կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և
կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.
4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով
ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է
ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների)
համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե
կատարված աշխատանքը՝ պայմանագրի պայմաններին, ապա
ա. համապատասխանում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու
մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
ստորագրվում է պայմանագրի կատարման պայմաններին, ապա
բ. չի համապատասխանում պայմանագրի կատարման
արձանագրությունը չի ստորագրվում.
5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման ավարտական
արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական
արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում
կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների
ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու
դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել
կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների
ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24107152.50
(քսանչորս միլիոն հարյուր յոթ հազար հարյուր հիսուներկու և
50լումա) ՀՀ դրամ, որից 4017858.75 (չորս միլիոն տասնյոթ հազար ութ
հարյուր հիսունութ հազար և 75 լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը
ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,
5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի
պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ
գինը:
5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի
օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի
պայմանագրի 4-րդ բաժնով

Հանրապետության դրամով անկանխիկ` դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

**Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում` սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում**[30.1]:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ` կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք` պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 15 (տասնհինգ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ

կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պահանջի հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող ... կատարման հետ կապված

նորմերով, և դրանց
կապված հարաբերությունները կարգավորող
համար պատասխանատու է Կապալառուն:
8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-
թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ՝ բացառությամբ՝
լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ֆինանսական
կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ պայմանագրի
հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կամ
կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման
ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն
անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության
օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար
անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները
չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն
ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին
ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հացեով
գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի
լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման
ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու
վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն
կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:
Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի
լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը
Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային
փոստին:
8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը
լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն
ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.13 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու
օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ,
յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն
պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են
պայմանագրի անբաժանելի մասը:
8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների
նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի
իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան
քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ.1
Կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900032000359
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան-----------------------
ստորագրություն
Կ.Տ.

**Կապալառու**
<<Լիլանարմ>> ՍՊԸ
ք.Երևան, Նուբարաշեն 12փ.42 ., բն 6
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Հ.Օհանյան-----------------------
ստորագրություն
Կ.Տ.

Հավելված թիվ 1
«07» 2022թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/65>>գնման պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի արձանի հարակից մայթերի սալիկապատման աշխատանքներ

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Շինարարական աշխատանքներ** | | | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | Բազալտե 150x300 մմ չափերի եզրաքարերի ապամոնտաժում հիմքերի հետ միասին, հետագա օգտագործման համար | գմ | 345.000 | 0.94283 | 325.27749 |
| 2 | Ա/բետոնի ծածկույթի քանդում ներառյալ շերտերը h-20սմ /1250 մ2/ | $մ^3$ | 390.000 | 2.34603 | 914.94980 |
| 3 | Շին.աղբի բարձում էքսկավատորով ա/ինքնաթափ մեքենաների վրա | $մ^3$ | 390.000 | 0.66768 | 260.39497 |
| 4 | Շին աղբի տեղափոխում 13կմ | տն | 539.800 | 2.76042 | 1490.07396 |
| | **Ընդամենը** | 14.89% | | | 2990.69622 |
| | **Կառուցման աշխատանքներ** | | | | |
| 1 | Նոր 150x300մմ բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա | գմ | 102.70 | 10.48378 | 1076.68414 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | տեղադրում բետոնե հիմքի վրա | | | | |
| 3 | Նոր 100x200մմ բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա | գմ | 84.00 | 6.41333 | 538.71936 |
| 4 | Բուսահողի մշակում էքսկավատորով բարձելով ա/ինքնաթափ մեքենաների վրա | $մ^3$ | 10.50 | 2.35154 | 24.69121 |
| 5 | Բուսահողի տեղափոխում 35 կմ հեռավորությունից /10,5x1,2/տն | տն | 12.60 | 6.13426 | 77.29172 |
| 6 | Բուսահողի փռում ձեռքով h-10սմ հաստությամբ /եզրաքարերի կողամասում/ | $մ^2$ | 105.00 | 0.39213 | 41.17396 |
| 7 | Սիզամարգերի տեղադրում սերմի ցանումով | $մ^2$ | 105.00 | 0.12513 | 13.13879 |
| 8 | Խճի շերտի պատրաստում բետոնե սալիկների տակ 10սմ հաստության | $մ^3$ | 195.000 | 1.00000 | 195.00000 |
| 9 | 5սմ հաստ. ցեմենտավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ | $մ^3$ | 97.500 | 12.21286 | 1190.75368 |
| 10 | Գունավոր բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում 4սմ հաստության | $մ^2$ | 1950.0 | 6.61000 | 12889.50000 |
| | **Ընդամենը** | 82.53% | | | 16578.86936 |
| | **Լրացուցիչ աշխատանքներ** | | | | |
| 1 | Դիտահորի մետաղական դռնակի քանդում՝ 1.80x1.70 մ /հանձնում շահագործողին/ | տն | 0.080 | 46.58537 | 3.72683 |
| 2 | Հին դիտահորի քանդում՝ 1.80x1.70x2.0 մ ,1հ ատ | $մ^3$ | 6.120 | 20.13388 | 123.21934 |
| 3 | Շինաղբի բարձում ձեռքով ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ | տն | 11.016 | 3.61754 | 39.85082 |
| 4 | 3-րդ կարգի գրունտի քանդում ձեռքով դիտահորի տեղադրման համար | $մ^3$ | 3.500 | 2.35708 | 8.24979 |
| 5 | Ե/մ՝ 2.0x2.0x2.0 մ նոր դիտահորի տեղադրում | հ ատ | 1.000 | 150.87102 | 150.87102 |
| 6 | Ե/մ 1.80x1.80 մ նոր կափարիչի տեղադրում, թուջե մտոցով | հ ատ | 1.000 | 123.19464 | 123.19464 |
| 7 | Ավելորդ գրունտի բարձում ձեռքով ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ /2,9մ3/ | տն | 5.220 | 3.61754 | 18.88356 |
| | [illegible] | $մ^3$ | 1.600 | 0.98569 | 1.57710 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | ճաղաշարի հին ներկի մաքրում խոզանակով | մ² | 32.000 | 0.34285 | 10.97115 |
| 10 | ճաղաշարի 2շերտյուղաներկում | մ² | 32.000 | 1.22450 | 39.18391 |
| | **Ընդամենը** | 2.59% | | | 519.72817 |
| | **Ընդամենը** | 100.00% | | | 20089.29375 |
| | **ԱԱՀ** | 20% | | | 4017.85875 |
| | **Ընդամենը** | | | | 24107.15250 |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նոր Նորք վարչական շրջանի Գայի արձանի հարակից մայթերի գունավոր գեղարվեստական սալերով սալիկապատման աշխատանքներ

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015,Արգիշտիի փ.1
Կենտրոնական
գանձապետարան
Հ/Հ 900032000359
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան----------------------------
¥ստորագրություն¤
Կ.Տ

**Կապալառու**
<<Լիլանարմ>>ՍՊԸ
ք.Երևան,Նուբարաշեն 12փ.42.,բն 6
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Հ.Օհանյան----------------------------
ստորագրություն
Կ.Տ

Հավելված թիվ 2
«04» 07 2022թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» գնման պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

### «*Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի արձանի հարակից մայթերի սալիկապատման*» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ***Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի արձանի հարակից մայթերի սալիկապատման աշխատանքներ*** | Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 45 օրացուցային օր ներառյալ |
| | | | |
| | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտի փ.1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000359
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան ------------------------
ստորագրությունը
Կ.Տ.

**Կապալառու**
«Լիլանարմ» ՍՊԸ
ք.Երևան, Նուբարաշեն 12փ.4շ., բն 6
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Հ.Օհանյան ------------------------
ստորագրությունը
Կ.Տ.

Հավելված N3
04. 07 2022թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/65>> գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 452311 87/3 | Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գայի արձանի հարակից մայթերի սալիկապատման աշխատանքներ | -- | -- | -- | -- | -- | -- | 23 200 000 | 23 200 000 | 23 200 000 | 24 107 152.50 | 24 107 152.50 | 24 107 152.50 | 24 107 152.50 |

*Վճարման ենթակագումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պատվիրատու**
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ.1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000359
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան------------------------
ստորագրություն
Կ.Տ.

**Կապալառու**
<<Լիլանարմ>> ՍՊԸ
ք.Երևան, Նուբարաշեն 12փ.4շ., բն 6
ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Հ.Օհանյան------------------------
ստորագրություն
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«07» 07 2022թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65>> գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________ | ______________ |
| ______________ | ______________ |
| գտնվելու վայրը ______ ____ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________ | հհ ______________ |
| հվհհ ______________ . | հվհհ ______________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20թ.
Պայմանագրի համարը՝ __________ Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պատվիրատուն և Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ______________ | ______________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________ | ______________ |
| [illegible] | ազգանուն,անուն |

Հավելված 4.1
«06» 07 2022թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱԾՁԲ-22/65>> գնման պայմանագրի

## ԱԿՏ N
## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ______________________-ին կնքված N__ ________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**
հայտը նախագծածներկայացուցիչ՝

_______________________ _______________________
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_______________________ _______________________
ստորագրություն ստորագրություն

acba

04 հուլիսի 2022թ.
ք. Երևան

Թիվ 061-114

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# Թիվ 20 61 40 426315/43

*(պայմանագրի ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 2.411.000 (երկու միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 31/08/2023թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 հունվարի 2024թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

acba

04 հուլիսի 2022թ.
ք. Երևան

Թիվ 061-114

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 20 61 40 426315/43

*(պայմանագրի ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 2.411.000 (երկու միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 31/08/2023թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 հունվարի 2024թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

acba

04 հուլիսի 2022թ.
ք. Երևան

Թիվ 061-113

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 20 61 40 426315/44

*(որակավորման ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 3.620.000 (երեք միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 31/08/2022թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 հունվարի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

acba

04 հուլիսի 2022թ.
ք. Երևան

Թիվ 061-113

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 20 61 40 426315/44

*(որակավորման ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 3.620.000 (երեք միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 31/08/2022թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 հունվարի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-22/65» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար: